*նուել է Սերբիայի Թագաւոր Դեզան կոչուած Ստեփան Ուրօշի ձեռքով և որը նշանաւոր դեր է խաղացել Սերբիական ժողովրդի պատմական կեանքում, մի ամիս է, որ պաշարուած է վայրագ և գազանաբարոյ արնաուտներով, որոնք սպառնում են կոտորել վանքի 450 ուղղափառ միաբաններին և հիմնայատակ անել այդ սուրբ վայրը։ Արնաուտները պահանջում են 40,000 ֆրանկ փըրկանք, բայց կեղեքուած ժողովուրդը չէ կարող այդքան դրամ հաւաքել, և վանքն աղքատ է։ Պրեզրէն քաղաքի արքեպիսկոպոսը արդէն դիմել է Կ. Պոլսի Ռուսաց դեսպանի և տիեզերական պատրիարքի օգնութեան, որ նոքա միջնորդեն Բարձրագոյն դրան առաջ։ Բայց առ այժմ ազդու միջոցներ ձեռք չեն առնուած։ Բելգրադի «Սլաւոնական ակումբը» լրագրութեան միջոցով դիմում է արել Ռուսաց ժողովրդին, ցոյց տալով Սլաւոն եղբայրակիցների անելանելի դրութիւնը Տաճկաստանում, և նրա զօրեղ օգնութիւնն է խնդրում։*

## ՀԱԲԷՇՆԵՐ.

*Հաբէշների մետրապոլիտ Սըրազան Մատթէոսը, Պետերբուրգից հայրենիք վերադառնալու միջոցին, այցելել է և Կ. Պոլիսը, ուր նորան փառաւոր ընդունելութիւն են ցոյց տուել։ Կ. Պոլիս այցելելու գլխաւոր պատճառն այն է եղել, որ Երուսաղէմում հայերի, երբ թէ հաբէշներից խլած, Դէիր—էս—Սուլթան վանքը իրենց ձեռքը ձգելու աշխատէ։ Անցեալ տարի այդ վէճը քննեցին տեղական Ցունաց և լատինացւոց պատրիարքները և գտան որ հաբէշների պահանջն անհիմն է ու վճռեցին յօգուտ հայերի։ Բայց հաբէշները չեն ցանկանում այդ որոշման ենթարկուել և աշխատում են Երուսաղէմում իրանց համայնքի դրութիւնը բարւոքել։ Մատթէոս մետրապոլիտը ներկայացել է Սուլթանին և վերջինս շնորհել է նորան Օսմանիէ շքանշան և շքախմբի անդամներին զանազան շքանշաններ։ Ցունաց Իօաքիմ պատրիարքը ուղարկել է մետրապոլտի մօտ առանձին պատգամաւորութիւն, որը նուիրել է նորան իւր կողմից մի թանկագին պատկեր։ Առանձին շքով և փառաւոր հանդիսով ընդունել է Մատթէոսը մետրապոլիտ Ռուսաց դեսպանատանը, ուր ընդ առաջ էր գնացել մի վարդապետ դեսպանատան քարտուղարի հետ։*

---